



Նախագահի գրասենյակ

2020 թվականի ապրիլի 21

Բարև LACC ընտանիք,

Երեկ կեսօրին Թաուն Հոլի ժողովի ընթացքում ես գրեթե լաց եղա, քանի որ առաջին հարցն իրականում մեկնաբանություն էր ... այն իսկապես ճանաչում էր: Դա ուսանողների շնորհակալությունն էր այն «հիանալի աշխատանքի համար», որ դասախոսները անում են սահուն անցում կատարելու համար: Այդ լսել ինձ շատ ուրախացրեց, քանի որ դասախոսներն իսկապես հոգ են տանում ձեր՝ ուսանողների մասին, և նրանք քրտնաջան աշխատում են ձեզ հաջողության հասնելու հարցում: Ես մոլորակի ամենաերջանիկ նախագահն եմ:

LACC հիմնադրամը կտրամադրի գրեթե 300 չեք կարիքավոր ուսանողների համար, ինչը հավասար է մոտավորապես \$200,000-ի: Նրանք տրամադրել են սարքավորումներ և պարագաներ այլ հատուկ ծրագրերի ֆոնդից, որոնք հասանելի են: Նրանք նաև միջոցներ են հայթաթել մեր ուսանողներից 5000-ի համար գրիպի պատվաստումներ տրամադրելու համար: Նրանք շարունակում են աշխատել ամեն օր՝ ձեզ և LACC- ին աջակցելու համար: Նրանք այժմ աշխատում են կրթաթոշակների վրա, որոնք կտրամադրվեն և կուղարկվեն ուսանողներին մի քանի շաբաթվա ընթացքում: Մենք չէինք կարողանա անել այն ամենը, ինչ անում ենք, առանց նրանց օգնության և աջակցության: Շնորհակալություն Ռոբերտ Շվարցին և LACC հիմնադրամի աշխատակիցներին:

Թեև հենց հիմա մեր քաղաքում զբաղվածությունը շատ սուղ է, մեր LACC-ի կարիերայի կենտրոնն անընդհատ աշխատանքներ է փակցնում, որոնք բաց են և պետք է լրացվեն: Կարիերայի կենտրոն կարող էք մտնել Cranium Café- ի միջոցով, և Դուք կարող եք ամեն տեսակի օգնություն ստանալ Կարիերայի կենտրոնում աշխատող հիասքանչ մարդկանցից:

Խոսելով եկամտի մասին՝ եթե սովորաբար հարկեր չեք ներկայացնում, թերևս դեռ անհրաժեշտ է փաստաթղթեր լրացնել ձեր խթանի չեկը ստանալու համար: Խնդրում ենք լրացնել հետևյալ հարցաթերթիկը, որպեսզի իրավասու դառնաք ֆինանսավորման աջակցություն ստանալու համար:

https://www.freefilefillableforms.com/?utm_source=CalMatters+Newsletters&utm_campaign=b132463f14-WHATMATTERS_NEWSLETTER&utm_medium=email&utm_term=0_faa7be558d-b132463f14-150227297&mc_cid=b132463f14&mc_eid=bb84aeeb03#/fd / EconomyImpactPayment

Նաև մեզ տեղեկացրեցին, որ ապրիլի 28-ից սկսած, Cal Fresh- ի մասնակիցները հնարավորություն կունենան օգտագործել իրենց EBT քարտերը մթերային ապրանքներ առցանց

ձեռք բերելու համար: Այո! Լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք կցված PDF տեղեկատվական ֆայլը:

Միգուցե ձեզ թվա, թե դժվար է մոտիվացիա ունենալ, սկսել աշխատել կամ չափազանց հիասթափվել այն լրացուցիչ պարտականությունների մեծ թվից, որոնք այժմ ունեք ձեր տնային միջավայրում: Մեր ռեժիմները ամբողջովին ընդհատվել են, և երբեմն էլ դա չափազանց շատ է: Բոլորս բախտավոր ենք: Լոս Անջելես շրջանի հոգեկան առողջության վարչությունում գործում է 24/7 «մեղմ գիծ», որպեսզի օգնի նրանց, ովքեր իրենց լավ չեն զգում: LACDMH-ի (800)854-7771 24/7 օգնության գիծը հասանելի է `տրամադրելու հոգեկան առողջության աջակցություն, ռեսուրսներ և ուղղորդում: Եթե արթնանում եք և գտնում եք, որ չեք կարող այսպես շարունակել, զանգահարեք նրանց, որպեսզի նրանք կարողանան ձեզ օգնել այդ իրավիճակից դուրս գալ: Կան բոլոր տեսակի բաներ, որ դուք կարող եք անել, բայց երբ ձեր առջև կարծես հսկայական լեռ է, որ պետք է բարձրանաք, երբեմն պարզապես անհրաժեշտ է, որ ինչ-որ մեկը ձեզ ցույց տա, թե որտեղից պետք է սկսել այն բարձրանալ:

Ակադեմիական գործերի բաժնի անունից

Ամառ 2020-ի դասերի դասացուցակը տեղադրված է առցանց: Դուք մինչև մայիսի 1-ը էլ. հաղորդագրությամբ կստանաք տեղեկություն ձեր գրանցման նշանակման հետ կապված: Խնդրում ենք գրանցվել որքան հնարավոր է շուտ, քանի որ ակնկալում ենք, որ այս ամռանը դասերի մեծ պահանջարկ կլինի, և տեղերը արագ կլրացվեն:

Շուտով սկսվում է նոստրոփերի առաքման երկրորդ հոսքը: Եթե դիմում եք ներկայացրել և սպասում եք, ձեր ուսանողական էլ. փոստին հաղորդագրություն պետք է ստանաք պարզևատրման մասին: Նոստրոփի առաքումը ակտիվացնելու համար հարկավոր է պատասխանել այդ էլ. հաղորդագրությանը: Հիշեք, որ էլ.հաղորդագրությունը չի գալու LACCD էլփոստի հաշվից: Այն պետք է ստանաք notify@NGWebsolutions.com կայքից: Խնդրում ենք փնտրել այս հասցեից եկած նամակ և համոզվեք, որ հետևեք հրահանգներին `ձեր մրցանակն ընդունելու համար: Նոստրոփը ստանալու համար անհրաժեշտ է ձեր պատասխանը:

Մենք աշխատում ենք մեր նոր գործընկերոջ ` UCLA-CESMII- ի հետ, Լոս Անջելեսի ներկայիս, վեց ամսիսների ընթացքում կարիքների և արտադրության ոլորտում տնտեսական վերականգնման շուրջ: Մենք սերտ կապի մեջ ենք այն բանի շուրջ, թե ինչպիսի պատրաստողական ծրագրեր են անհրաժեշտ ներկայումս, վեց ամսիսների ընթացքում և առաջիկա մի քանի տարիների ընթացքում աշխատատեղերի համար: Կարծում եմ, որ այս դժվարին ժամանակահատվածն անցնելուց հետո մենք կտեսնենք զբաղվածության աճ Լոս Անջելեսում: Լոս Անջելեսը հիանալի քաղաք է` լի հույսով և խոստումով: Հիմա մենք մարտահրավերների միջով ենք անցնում, բայց դա ժամանակավոր է:

Ուսանողական ծառայություններ բաժնի անունից

Ուսանողների համար կարևոր ամսաթվեր`

Ուրբաթ, մայիսի 1-ին` ուսանողները կստանան էլեկտրոնային փոստ` ամառային գրանցման նշանակմամբ

Երկուշաբթի, Մայիսի 4-ին - սկսվում է ամառային դասերի գրանցումը

Կիրակի, Մայիսի 10-ը՝ վերջին օրը՝ դիմում խնդրագիր ներկայացնելու Pass/No Pass-ի համար

Կիրակի, Մայիսի 10-ը - վերջին օրը՝ EW-ով(Emergency Withdrawal) դասերը դադարեցնելու համար:

Մենք ծրագրեր ենք պատրաստում շատ առանձնահատուկ վիրտուալ ավարտական արարողություն ունենալու համար: Մենք հավատում ենք, որ մեր մեծ շրջանավարտներից շատերը ցանկություն կունենան մասնակցել, քանի որ նրանք կարող են դա անել հեռակա կարգով: Մպասեք հետագա տեղեկությունների, կարծում եմ, որ հիանալի է լինելու: Եթե դեռ չեք դիմել ավարտականի համար, խնդրում ենք դա անել հնարավորինս արագ: Հայտը հասանելի է Admissions & Records-ի կայքում և կարող է լրացվել առցանց: Չնայած դա գուցե չի կարող լինել դեմ առ դեմ ավարտական, սակայն այն կլինի անհավատալի ճանաչման արարողություն:

ՀԱՎԱՏԱՆՎԱՃԻՐ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԻՐ Դուք բոլորդ հիասքանչ եք, ես զգացված եմ...

Լավ և ապահով եղեք:

Մերի

Խնդրում ենք այցելել [LACC](#) կայք՝ այս հաղորդագրությունը հայերեն, կորեերեն, ռուսերեն կամ իսպաներեն լեզուներով կարդալու համար

Please visit the [LACC website](#) to view this message in Armenian, Korean, Russian, or Spanish.

Посетите LACC [website](#) , чтобы просмотреть это сообщение на Армянском, Корейском, Русском или Испанском языках.

Para ver este mensaje en español, favor de visitar el sitio web de [LACC](#)